



Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ԲԱՆՈՒԹԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ԿՂԵՐ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԱՆ Գ.

Մեր մինչև ցարդ ըստծներէն ինքնին կը հասկցուի թէ մեր եկեղեցականաց՝ մեզ հետ ազգային ոչ-կրօնական իրաւանց վայելման մասնակցութիւնը՝ ոչ թէ ազգին կամ քէն բարձր հեղինակութենէ մը կը բղխի, այլ նոյն իսկ ազգին ախարհական մասին անխորոզութեանը և զիջողական յօտարամտութեամբը եղած հաստատուած սովորութիւն մէ, որ իւր հնութեամբը՝ աւանդական օրէնքի կարգ մտեր է:

Մեր կղերին վայելած ազգային ոչ-կրօնական իրաւանց մասնակցութեանը ծագման այս խնդիրը բնաւ այժմ յուզելու տեղի չը կար, եթէ Սահմանադրութեան վերաքննեալ ծրագրին Բ. Ամփոփմանը վարչական կազմութեանը վերաբերեալ գլխոյն երկրորդ ընթերցման քուէարկութիւնը՝ օրինաց և բանավարութեան հակառակ՝ եղծունելու նպատակաւ ոմանց կողմանէ այլևայլ ապօրինաւոր միջոցներու և թերազրութեանց չը ձեռնարկուէր, որոց մին էր 4-Յ երեսփոխանաց-տուած բողոքը, զոր իմաստակութիւն կոչեցինք, և միւսը՝ կրօնփոխութեան մատուցած բողոքը, որ զայն ալ անտեղի և անպատեհ համարեցինք:

Մեր այս դատաստանը ժխտելու համար է անշուշտ որ կղերական կուսակցութեան դործիք թերթին ալ ելաւ երեք յօդուածով դէմ խօսելու մեզ, աւգ. Բ. Ամփոփման ընտրութեանը դէմ յառաջ եկած բողոքներն պաշտպանելու և շատագուցելու համար, սակայն այդ շատագուցելունը այնքան խախուտ փաստերու և խաբէական ձեռնարկութեանց վրայ հիմնուած էր, զորոց մէկ քանին ցոյց տուինք արդէն, որ յիշեալ թերթը բոլորովին լռութեամբ անցաւ 4-Յ երեսփոխանաց տուած այն բողոքը, որոյ ստորագրողներէն մին ալ դուրս խմբագրի-

ւրն եղած էր, և զոր պարզապէս զուտ իմաստակութեան մարդիւնք հռչակեցինք, և ինքն ալ իր լռութեամբը ընդունած եղաւ այդպէս ըլլալ:

Կը մնար կրօնականաց ստորագրած բողոքին անտեղի լինելը բացատրել, Երեւնց բողոքոյ նիւթը բազմապէս ոչ-կրօնական իրաւանց կէտերը, որոց ազգին կամքէն և ոչ թէ բարձրագոյն հեղինակութենէ մը բղխած ըլլալը ցոյց տուինք, եթէ իրօք այդ Բ. Ամփոփման ծրագրէն դիտմամբ դուրս ձգուած իսկ լինէին, դարձեալ և այնպէս անտեղի էր ըսել թէ՝ քանի որ այդ կէտերը յիշատակուած չեն՝ անկարելի է մեզ ընդունել՝ վասն զի նախ՝ որ կրօնականը իրաւունք չունէին այդ կէտերը իբր դուրս ձգուած կոմ մերժեալ նկատելու, քանի որ այդ կէտերը պարունակող բարեփոխութիւն մը ոչ առաջարկուած էր ծրագրին մէջը ներմուծելու համար, և ոչ ալ այդպիսի բարեփոխութիւն մը քուէի դրուելով մերժուած, որմէ յետոյ միայն կրնային ատենք իբր մերժեալ նկատել: Եւ քանի որ չէին մերժուած, հետեւաբար այդ կէտերուն՝ իբր բարեփոխութիւն ծրագրին մէջն ընդունուելուն հաւանակութիւնը միշտ կը մնար, ուստի և այժմէն անպատեհ էր դոցա անյիշատակ մնալն առարկելով Բ. Ամփոփման ծրագրին ընդունելութիւնն անհնար համարել իրենց, և այնքան անպատեհ՝ որ եթէ իրօք այդպիսի մերժում մ'իսկ եղած լինէր հանդիսապէս, դարձեալ տեղի չը կար այդպիսի լեզուաւ մը բողոքելու, որպէս թէ ազգին սրբազան և անբռնաբարելի իրաւունքը ռանակոխ եղած, կամ կորստեան վրասանգի ենթարկուած ցոյց տալով, մինչդեռ իրօք ուրիշ բան չեն դուրս բայց եթէ կղերին վայելած իրաւունքը՝ աշխարհականին թոյլաբուութեամբն ու անխորոզութեամբը, որոյ դէմ փոխանակ բողոքելու, ընդհակառակն զայդ վերահաստատելու համար օրինաւոր վիճաբա-

նութեամբ դոցա օգուտն ու կարեւորութիւնը ցոյց տալու պարտական էին:

Մեր ոտոյգ բութու համար՝ կղերին ազգային ոչ-կրօնական իրաւանց վայելման մասնակցութիւնը շատագուցելու համար պէտք եղած պաշտպանութիւնը՝ սոյն իսկ յիշեալ բողոքը ստորագրող եկեղեցականաց մէջ գտնուող խելահաս և հմուտ մէկ քանի կրօնականաց կողմէն լսել կը յուսայինք, բայց զարմանօք կը տեսնեմք թէ իրենք՝ իրենց այդ սրբազան և անբռնաբարելի կոչած իրաւանցը մասին խորին լռութիւն մը պահելով, դուրս պաշտպանութիւնը հրապարակային այնպիսի թերթի մը յանձներ են, որ ինչպէս դրականութենէ՝ նոյնպէս և պտտութենէ անտեղեակ, ինչպէս անկեղծութենէ՝ նոյնպէս և ուղղամտութենէ՝ դուրկ ծանուցեալ հանգամանքներովը, եթէ իրենց այդ պնդած խնդիրը մէկ քանի պաշտպանելի կողմեր ալ ունի՝ զանոնք ևս վասնզելու (ֆօթօթօթ) վիճակին մէջը ձգած են:

Հաստատելու համար մեր այս ըստածը, այդ մասին իւր ըրած փաստաբանութեանը մէկ քանի փաստերը ձեռք առնուածք, ոչ թէ իր փաստաբանական տարանդին արժէքն ու չափը ցոյց տալու համար, քանզի անձանօթ չէ այդ հասարակութեան այլ յառաջ բերած փաստերուն ինչքան խախուտ և տկար բաներ ըլլալն ապացուցանելու համար, որովք կղերը փոխանակ դատը վաստակելու՝ ընդհակառակն զայդ կորստեան վրտանդի մատնած կըլլայ:

Սա ևս փութամբ յայտնել թէ յիշեալ թերթը կրօնականաց այդ իրաւունքը սրբազան, անբռնաբարելի, և հետեւաբար անվիճաբանելի հռչակելէն յետոյ, երկու օր վերջըն ալ կեղծ վիճաբանութեամբ զայդ պաշտպանելու, ճիշդ ինչպէս որ մեք պահանջած էինք, և ասով առանց ինքն անձամբ խոտտովանելու՝ մեր պնդած կրկին ճշմարտութիւնները կընդունի, մէկն այն է թէ՛ յիշեալ իրաւանց վայելման

խնդիրը՝ իրենց ըսածին պէս՝ անվի-  
ճաբանելի չէ, այլ խնդրոյ տակ ար-  
կանելի, երկրորդն ալ այն է թէ՛  
զանոնք հաստատ պահպանելու հա-  
մար՝ դոցա օգուտը ճանչցնել ջանա-  
լու է:

Յիշեալ թերթն ասոնց երկուքն  
ալ լռեցեայն կրնդունի, թէ՛ պէտ ա-  
ռանց յայտնապէս խոստովանելու:

Մեր ալ ուզածը ոչ թէ իր սը-  
խաղած ըլլալուն յայտնի խոստովա-  
նութիւնն է, այլ դառնալով մտոր  
չաւզէն՝ ուղիղ ճանճան մտնելը, ասի  
բու է մեզ, թէ՛ պէտ օձին բնու-  
թիւնն է նայն իսկ շիտակ ճամբու  
վրայ ալ ծուռ ու մուռ ընթանալը:

**ՀՐԱՆԻՐ ԱՌ ԱԶԳԱՅԻՆ  
ԵՐԵՍՓՈՒՍԱՆՍ**

Ազգային ժողովը նիստ ունի  
յառաջիկայ ուրբաթ, Մարտ 12  
ի Վալտթիա:

Ատեանը պիտի ըստուի ճիշդ-  
ժամը 6 ին և գոցուի 10 ին:

Հրաւիրեալ են Երեսիօխան է-  
ֆէնտինները՝ իրենց ազգասիրական  
պարտականութիւնը կատարելու  
փութալ:

1876 Մարտ 6  
Կնիք Պատրիարքական

**ՕՐԱԿԱՐԳ**

Ա. — Մնացորդ տեղեկագիրք  
քննիչ Յանձնատնօղովոյ ի վերայ ա-  
ռաջարկութեան Ս. Պատրիարք Հօր:

1. Խնդիր կաթուղիկսութեան  
Աղթամարայ:
2. Խնդիր " Սոյ:
3. " Մուրատեան վրժինի:
4. " Սահմ. պատասխանա-  
տուութեան Ս. Պատրիարք Հօր:
5. " Եկեղեցեաց և դա-  
սատուաց:

Բ. — Վերաքննութիւն Սահ-  
մանագրութեան. — Գլուխ թաղա-  
կան մատակարարութեան:

Ատեանդպիր  
Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

**ԱԶԳ**

ԱՌ ԹԱԳ. ԸՆՏՐՈՂՍ ԽԱՍԳԻՒՂԻ

Գիւղիս Թաղ. Խորհուրդը իւր  
քառամեայ պաշտօնավարութեան  
չըջանը աւարտած ըլլալուն համար՝  
հրատարականն առ Ազգ. Կեդր.  
Վարչութիւնն մատուցած և նորոգ  
ընտրութեան հրահանգ ընդուն-  
ուած է:

Վասն որոյ ներկայ ազգարա-  
րութեամբս կը ծանուցանեմք խա-  
ղիւղիս համայն պատուարժան ընտ-  
րող ազգայնոց, որ փութան իրենց  
ընտրողական իրաւունքը ի գործ  
դնել յառաջիկայ կիւրակէ օր մարտ  
14 Եկեղեցեւոյն բակը կախուած հը-  
րահանգին համեմատ:

Մնամ աղօթարար  
7 մարտ 1876 Նախագահ  
Խառ-գիւղ Ընտրողական ժող.  
Պօղոս Վ. Խօլտման

Վեդու. — Երկուշաբթի օր-  
ուան թերթերնուս առաջին երեես  
միջին սինակքն վերիը գանուած  
պարբերութեանը մէջ տողի գետեղ-  
ման սխալում մը տեղի ունենալով  
իմաստը անհասկանալի ըլլալու չափ  
չփութում ինչուն համար, յիշ-  
եալ պարբերութիւնը պէտք է հե-  
տեալ կերպիւ կարդալ:

«Մնոնք . . . աշխարհականին  
զիջողութեամբն ու թոյլտուութեամբ-  
բը կղերին վայելած ոչ-կրօնական  
իրաւունքներն ազգային հեղինա-  
կութենէն տեղի բարձր հեղինա-  
կութենէ մ'ստացած ցոյց տալու  
կեննն, և կղերն ալ ասոր դէմ  
լռելով ձայն չը հաներ: Սոի պար-  
զապէս խաբէութիւն մ'ըլլալէ զատ  
նաև ապերախութիւն մ'ալ է ազ-  
գին դէմ, և թշնամանք մը՝ ազգին  
ներողամտութեան և զիջողական  
արամադրութեանը դէմ:

**ՀԵՌԱԳՐԱԿԱՆ**

Բարիք 19 մարտ

Պաշտօնէութիւնը ձախակողմ-  
եանց յայտադրին գործադրութեա-  
նը պիտի հետևի:

Հուլիս 19 մարտ

Խորհրդարանին մէջ գանձուց  
պաշտօնեայ Պ. Մինկէթթի, երկա-  
թուղեաց գնմանը ծրագրին վիճա-  
բանութիւնը օրածագել առաջարկե-  
լով, իւր այս առաջարկութիւնը  
մերժուելուն վրայ, պաշտօնեայք  
խմբովին հրատարեցան:

Պ. Տէպրէթիս յանձնչտուս նոր  
պաշտօնէութիւնը կազմել, սակայն  
որոշուելիք անձանց որոնք ըլլալին  
դեռ յայտնի չէ:

Մտորիտ 19 մարտ

Ալֆոնս թագաւորն հասնելով,  
եռանդուն խնդութեամբ ընդուն-  
ուեցաւ ժողովրդէն:

Պէլլրատ 19 մարտ

Աւստրիոյ և Ռուսիոյ տուած  
խրատներն, ինչպէս նաև սահմանա-  
դիտոյն վրայ Օսմ. զօրութեանց հա-  
մախմբուիլը, Սերվիոյ պատերազ-  
մատէր նկրտումներն զպայցին: Այս  
կերպով քաղաքական կացութեան  
կնճռոտելուն և տագնապին առաջ-  
քըն առնուեցաւ:

**ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

Բարիքի աշխարհագրական Ս. ր-  
ուեստահանդէսին զրկուած նիւթե-  
բը այս շաբաթ օր իւրաքանչիւրն  
իրենց տիրոջը յանձնուեցաւ կալա-  
թա Սէրայը, Տամատ Մահմուտ բա-  
շայի նախագահութեամբը:

—Վառնայի վերջին թղթաբե-  
րով հասած թերթերն, Հէրսէքի  
ապստամբութեանը վրայօք յաջող  
լուրերով լի են, որոց ամենքն ալ  
սա կը հաստատեն թէ ապստամբու-  
թիւնն իրօք երթալով սկարանալու

վրայ կը գտնուի, Զարմանալին սա-  
է թէ, Պաղմատիոյ մէջ այնպէս կը  
հաւատան թէ Լիւուպիպրաթիչ ա-  
պրտամբապետը Պաղմատիոյ իշխա-  
նութեան դէմ դատ պիտի բանայ  
եղեր, զինքը Օսմ. սահմանահողին  
վրայ ձերբակալած ըլլալուն համար:

—Կրտսի թէ մէկ քանի դրա-  
դէտ յունաց նախաձեռնութեամբը  
իրենց աղղին մէջ հանդանակու-  
թիւն մը պիտի բացուի, սորա արդ-  
եամբը ազգային տպարան մը բանա-  
լու, Սրեկէքի մէջ յունական դըպ-  
րութիւնը տարածելու համար:

—Տպագրական տեսչութիւնը  
երկու նոր թերթերու հրատարա-  
կութեան արտօնութիւն տուաւ, մին  
Յունարէն Յիֆ անուն, և միւրը Մ-  
հիֆ անուամբ:

—Եէտի Գուլէի գուրսի գին,  
կըսէ Մուս, լուցիկի նոր գործա-  
րան մը հաստատուիլ կառաջադրուի  
եղեր:

—Էտրնէ և Նիշ ձմերոց Օսմ.  
զօրաբանակներն այս շաբթու հրա-  
ման ընդունեցին պատերազմական  
գործոց պաշտօնէութենէն, ուղղակի  
Ս. Ֆիա երթալու:

—Առջի գիշեր Օրթագիւղ  
տուն մը դող մտնելով, տանը մար-  
դիկը իմանալուն վրայ օգնութիւն  
կը կանչեն: Մօտակայ դրացիներէն  
երկու երիտասարդ այս օգնութեան  
աղաղակը լսելով հըրգեհ կը կարծեն  
և անմիջապէս յիշեալ տանը կը դի-  
մեն, ուր հըրգեհ տեղ՝ դեմերին  
խումբ մը գողեր կենն, որք զը-  
զարնեն կապաննեն երկու երիտա-  
սարդներն ալ:

—Պրուսայէն դրուած նամակ մը կը  
ծանուցանէ թէ հուղկահարութիւնը  
վերստին սկսելով յիշեալ գաւառին  
մէջ, անցեալներն 7 աւտակաց  
խումբ մը Գէթթահեայէն դարձող  
սուրհանգակներն Պրուսայէն երկու  
ժամու չափ հեռուորութեամբ տեղ  
մը բռներ և զանոնք մէկ մէկ ծա-  
ռի կապելով, վրանին գտնուած  
150 ոսկին կողոպտեց են: Խեղճե-  
րն 40 ժամ պրկուած ֆիալէն յի-  
տոյ ազատուեց են:

**Թ Ե Ր Թ Օ Ն**

**ԲԱՐԻՉՈՒ ՏԱՐՓԱՆԻՐ**

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԲԱՐԵԿԵՆԳԱՆ

(Երեսնամեայ)

Երկողներուն պար բռնած  
չըջանակը սանդիսին տուալը կ'զրո-  
նուէր: Պարմէնն ու Ամբրիկացին,  
պահ մը կանգ առնելու հարկադ-  
րուելով դիմակաւորացը պատճա-  
ռած տատանուտ շարժումներէն,  
ասոնց մէջ տեղէն անցնելու համար  
ճանբայ մը բանալ ուղեցին իրենց:

խակ ձկնադէմ նաւաստին Ուէսթէր-  
նը տեսնելուն պէս, խակոյն կտրեց  
երգը:

— Առեցէք ամենինդ ալ, դո-  
չեց իւր շեփորին մէջէն:

Անն մարդ լսեց, բայց ի  
հնդկահաւէն, որն որ իւր թէրա-  
մէնի վէպին վրայ, հեռեեալ նշա-  
նաւոր տաղաչափութիւնն ալ յաւե-  
լու հարկ կը համարէր:

Ժողէքէն պիտի խօսի,  
Սկանդ դրեք ժողէքէնի:

Ժողէքէն սեղանի մը վրայ ե-  
լաւ կանգնեցաւ:

— Սըխուեցէք, իրարու մօ-  
տեցէք ըսաւ, — պարտիզին մէջ զին  
ծեծող անզգամը հոս է եղեր:

— Հուստամը աչքերնուս, ը-  
սաւ հնդկահաւը:

— Մէկը գտեր է, յաւելցուց  
սեխը, — Գարմէնը, Սնտաու պի  
գեղուհին է հեռինը, սա Թամբլի  
հրապարակին վրայ ցիտին մէջը  
ֆաթի կարաւող տղիկը:

— Կիշտանը սա օտարականը,  
ըսաւ բուն տիրաձայն:

— Յաղթանակաւ վերցնենք տա-  
նինը:

— Այ՛ ո՛չ, իր հեղինէն սա  
նենը ձեռքէն:

Գարմէն ակներև տատամու-  
թեամբ մ'այս անտարանը կը դի-  
տէր: Երթներն ջղածգութեամբ մը  
սեղմուեր էր, յօնքերը կնճռոտեր,  
և աներկիւղ ու խիստ դէմը մ'ա-  
ռեր էր:

— Վրադ պիտի յարձակին, ը-  
սաւ կամայ մ'Աւէսթէրնի, — դուն  
ուժով ես, ասոնք արբեալ... ծակ  
մը բաց սա ամբոխին մէջէն ու ան-  
ցիր, ես ալ կը հասնիմ ետեւէդ:

Աւէսթէրն դիմակաւորաց այս  
կարճ խօսակցութենէն բուն մ'ալ  
չէր հասկցեր, բայց կը տեսնէր որ  
ասոնք իր ճանքան արդիւն կու-  
զէին, իմած ուղեից հեզուկն ալ  
գիտուն մէջ եռալ սկսեր էր: Բը-  
ռունքը գոցեց ու համարձակ քայ-  
լով մը յառաջ նետուեցաւ:

Սեխին փորը պատուելով, հան-  
դիստեսաց ոտքերուն մէջը գլորե-  
ցաւ, հնդկահաւը գեախն տապա-  
լեցաւ, բուն ալ անկէ աղէկ վիճակ  
մը չունեցաւ: Անցքը բացուեր էր:

— Օգնութիւն, ժողէքէն, դո-  
ւայ ձկնադէմ նաւաստին շեփորին  
մէջէն, — դաւախներով, սրուակ-  
ներով, տա չեփե՛ք սպաննեցէք:

Աւէսթէրն վերջին սեղանին  
առջևէն կանցնէր, երբ սրուակ մը  
չունչելով ականջին քովէն սրացաւ  
անցաւ ու դիաց պատին զարնուե-  
ցաւ ցրեխ ցրեխ եղաւ, միևնոյն  
պահուն գարեջրոյ դաւաթ մ'ալ  
եկաւ ծածրակին (էնքոէ) զարնուե-  
ցաւ:

Նտին դարձաւ, սրուակ մ'ալ  
ճակատին եկաւ:

— Հո՛ւր հո՛ւր, կը դոռար ժօ-  
ղէքէն:

Աւէսթէրն, կատրած, մօտա-  
կայ սեղանի մը վրայէն գարեջրոյ

բարձ մը յափշտակելու պէս, նո-  
րէն իւր հակառակորդացը մէջը  
նետուեցաւ:

Սուկալի ծեծկըւք մըն է բըր-  
դու ասոր վրայ, խմբին քիչներէն  
մին ոտարեվաճառի մը կերպարանք  
մտած էր, ասոնց գործածած թուր-  
դանակին տեղը՝ արուեռտարանդակ  
կոթով մը գեղեցիկ դաշոյն մը կը-  
րելով մէջքը:

Ասի արջին ասոնք եղած էր:

Կուռոյն խառնակութեանը մէջ  
արջը կուրծքին անանկ ուժդին բը-  
ռընցի հարուած մ'ընդունեց, որոյ  
համը՝ Պոսթընի մէջ կամ Թամիզի  
գեաեղերը զայդ ուտող մէկը մի-  
այն կրնայ գիտնալ: Կատարութե-  
նէն ու արբեցութենէն մոլեալ, ար-  
ջըն խակոյն իւր ոտարեվաճառ կնոջ  
մէջքէն քաշեց դաշոյնը ու Ուէս-  
թէրնի կուրծքը մխեց: — Ուէս-  
թէրն սասանեցաւ:

Սակայն պողպատեայ ձեռք մ',  
որ Աւէսթէրնի կուրծքն սպառնա-  
ցող հարուածը խոտորեցնելով ար-  
գիւեր էր, արջին մատանցը վրայ  
գոցուելով, դաշոյնը՝ ձեռքէն խլեց:  
Միևնոյն միջոցին Գարմէն, սր ինքն  
էր սուրը խլողը, իւր վաղդաչուր-  
թին բերանը Սմերիկացիին ակն-  
ջին մօտեցնելով ըսաւ իրեն,

— Եկ' ու հետս կրսեմ քեզ:

Աւէսթէրն երեսը նայեցաւ ան-  
գամ մը, և բարկութիւնն անցաւ:

Գարմէն աճապարանօք առաւ  
տարաւ զինքը, և երկուքն ալ սան-  
դուխին վրայէն անհետեղան:

Յաղթական երկար գոչիւն մըն  
էր բըրդաւ ետևնուն:

— . . . Սնողակ ձեռքէ նետուած  
գաւաթով մ'  
Վերաւորեցի զինք խորունկ  
խոցով մ' . . .

ըսաւ հնդկահաւը սանդխին մօտե-  
նալով, չէք հաւատար նէ՛ ահա տե-  
սէք արիւնը:

— Ստուգիւ արեան լճակ մը՝  
յաւելցուց բուն, է՛հ, վրէժնիւ ա-  
ռինը:

Շնորհակալ ըլլանք աստուածոյ,  
ըսաւ ժողէքէն, և մէկ մէկ սուրճ  
խմենք:

Սըջը գեռ ձեռքը բաց բըռ-  
նած, որմէ խլեր էին դաշոյնը,  
անշարժ կը կենար, հագիւ բրածին  
վրայօք զիտակցութիւն մ'ունենա-  
լով:

Գարմէն թեք մտած Ուէս-  
թէրնի, որն որ խելացնոր ու ա-  
րիւնլուայ կը քայլէր, Պոսթընի փո-  
ղոցին բերնէն դուրս ելնելով, Վա-  
լայի փողոցը մտան: Ս.յս միջոցին  
Գարմէն դիմակ մը հանելով զըր-  
պտնէն երեսն անցուց, և Ուէս-  
թէրնը խոթեց այդ անուն չունե-  
ցող, խոնաւ, մուրթ, ոլորապտոյտ  
ու անմարդի նրբանցներէն միւսն  
մէջ, ուրկէ Բարի-Տղայոց-Նոր փո-  
ղոցը կեղնուի:

Մոյն նրբանցքին դրանը վե-  
րը, փոքր թափանցիկ ապակիի մը

Վրայ հետեեալ բաւերը կտեսնուէին.  
ՎԱՅՐՐԵՆԻՆ ՊԱՆՈՒԿԸ,  
ԿՍՀԱՒՈՐԵԱՒ,  
Յոյժօրու  
(Երբեմնեւ)

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Իսթինաֆի անգամ Ետեղադէան Կա-  
րապետ էֆ. Թէմեիզի Հուգուզի անգամ,  
Ծովային դատարանի անգամ Թովմաս  
էֆ. Բերայի նախնական դատարանին ան-  
գամ,

Թէմեիզի առաջին Միւսէյիլ Եւմեստ-  
տին պէյ՝ Ծովային դատարանին Իսթինա-  
ֆի անգամ,

Բերայի դատարանի անգամ Եօրկիա-  
տիս էֆ. առևտրական ատենի Իսթինաֆի  
անգամ անուանեցան:

— Ահմէտ Մուխթար փաշայ, որոյ Կաշ-  
քայէն մ կնիլն երեկ ծանուցինք, երթալ  
Բիզայի մօտ դումարեալ ապստամբներն  
ցրուելու, երեկուան օրը հեռագիր մ'աղ-  
ղելով մեծ Եպարգոսին կը ծանուցանէ թէ  
իւր ակնկալութեանն հակառակ, մարդ չէ  
գտեր հոն ապստամբներէն, որոնք օսմ.  
զօրքերն հասնելուն պէս փախչելով ցրուե-  
ր են, սակայն՝ ուր երթալին յայտի չէ:

— Սրտուեր է թէ Հերսէքի ապստամբ-  
ներէն անոնք միայն կայսերական հրովոր-  
տակին շնորհած ներողութիւնը և արօ-  
նութիւններն վայելելու իրաւունք պիտի  
ունենան, որ նք որ մինչև մարտ ամսուն  
վերջը հնազանդելով օրինաւոր խիստու-  
թեան, տեղերին դառնան, իսկ այս պայ-  
մանաժամը լրանալէն յետոյ երկիրնին չը  
վերադարձող ապստամբ հերսէքցիներուն  
դոյքն ու ստացուածքը յարքուխիս գրաւ-  
ուելով պիտի վաճառուի:

— Բէշթէր Ադաի գրուած նամակ մը  
կը ծանուցանէ թէ Խտուխա սլ ո՛չ նուազ  
օգնութիւններ մատուցեր է Հերսէքի ա-  
պստամբութեան: Յեղափոխական մաս-  
նաժողովը, որ գեռ Կարիպալտի տնօրէ-  
նութեանը ներքև կը գտնուի, աշունէն  
սկսեալ մեծաքանակ նպաստ հանգանակեր  
է ժողովրդոց Սոսիալիսթ ըսուած մասէն,  
որպէս թէ հերսէքցի ապստամբեալ չքա-  
ւորաց օգնելու, բայց իրօք կամաւորներ  
զինուորելու և զէնք գնելով Հերսէք զրկե-  
լու համար: Կամաւորներն գտեր, իսկ  
կանոնաւոր և աջողակ հրամանատար մը  
չեն կրցիր գտնել, Կարիպալտի այժմօրիչ  
գործով մ'զբաղած լինելով: Ասոնց նպա-  
տակն ուրիշ բան չէ, կըսեն, բայց եթէ  
աւագափորական գրութեան դաղափարը  
տարածել բոլոր Եւրոպայի մէջ:

— Բանի մ'որ յառաջ Գարատաղ զըր-  
կուելու համար մէկ քանի թնդանօթ և  
800ի չափ հրաձան Բաթթարօ հանուած  
ատեն, Աւստրիոյ կառավարութիւնը զայն  
կը զրուէ, և երբ կը պահանջուի իրմէն  
զանոնք, կը պատասխանէ թէ մինչև որ ա-  
պստամբութիւնը չը խաղաղի, սպառազի-  
նութեան վերաբերեալ բան մ'ալ չը պիտի  
թողու որ անցնի:

— Կրատիչացի հեռագրով թերն գեռ  
աւրուած ըլլալով, երեկուան Եւրոպայի  
հեռագիրներն դարձեալ ետ մնացին: Կե-  
րևի թէ ապստամբ իրենց ճգնաժամի կա-  
տաղութիւնը թեղերէն առնուլ սկսած են:

ԾԱԽՈՒ ՏՈՒՆ

Իսկուտար Իճատիէ թաղը զպրօցէն  
վար Նիպի-զար փողոց հինգ կանգուն ե-  
րեսով հարիւր կանգուն գետնի վրայ 2  
սենեակ, ասանձին ջրհոր և պարտիզով  
տուն մը ծախու է, առնել ուղողը պէտք  
է Իճատիէ քարտքօրի դիմաց արքայ ֆի-  
լիկ աղայի դիմէ տեղեկանալու:

Մ Է Լ Ա Ն Օ Ժ Է Ն

Գ Ե Ղ Ա Ջ Ո Ւ Ր

ՃԵՐՄԱԿ ՄԱՋԵՐ ՆԵՐԿԵԼՈՒ

Այս գեղը, որ մէկ վայրկեանի մէջ և ամեն դոյնով ճերմակ մազերն ու մորուքներն, առանց վրնասերու մորթին և առանց անախորժ ու և է հոտ մ'ունենալու, փորձուած յաակութիւն մ'ունենալով կը գտնուի Տէլլա Սուտայի, Չօպանեանի և Քիւչիւքեանի գեղաւանները:

Գ Ա Ղ Տ Ն Ի Ք Հ Ն Գ Կ Ա Ս Ս Ա Ն Ի

Կ Ա Ս

Մերձեալ սէրէն գոյոցած չորս սոսկալի վրէժինդրութիւններ

Յ Ա Ղ Թ Ա Ն Ա Կ Ա Ր Գ Մ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Հետաքրքրական թատերգութիւն 'ի հինգ արարս, վեց պատկերս և 'ի մի վերջարան:

Յ. Կ. ՊՅՅԱՃԵԱՆԻ

Սոյն ընտիր, հետաքրքրաշարժ և ընթերցման արժանի դիրքը Հընդ-կատանի սոսկալի ընկերութեան սփրինքը կը յայտնէ, ընկերութիւն մը՝ որուն զոհ եղան անթիւ Անգղիացիներ:

Կը ծախուի բոլոր գրավաճառաց քով, նաև Պահճէ գարուսուճի Պօղոս աղային խանութը և կա՛մուրջի դիլու պարագան զին 7 ու կէս զրշ:

Մ Օ Ր Ի Ի

Չ Կ Ա Ն Ի Ի Ղ

ԲԵԹԵՐ ՄԻԼԼԵՐ ԳՈՐԾՆԵՐԱՆՈՊԵՏԻ

Մաքուր առանց հոտի և անախորժ համու, և զիւրամարս եղած այս ամենալաւ տեսակէն եղած ձկան իւղը, որ մասնաւորապէս Լոնտրայի հիւժախտից մեծ Հիւանդանոցին մէջ կը գործածուի միայն, այժմ Պօլիս ալ կը գտնուի թէ՛ հօխայով և թէ՛ եռանկիւնի շիշերով:

Պօլիս ԵՂՆԻ Ճամի Պ. Կողմի Նազարթի:

Ղալաթիա Վէլիչի և Բնի:

Բերայ՝ Քանձուք Ֆրէրի գեղաւանները:

Հօխայով կը ծախուի մինակ Պօլիս կամրջին գէմը Պ. Վէնսան Մաննիի և Եէնիգարու Պ. Թէտոտորիաի գեղաւաններն:

Մինակ շիշով կը ծախուի Պօլիս ԵՂՆԻ Ճամի Քիւչիւքեան եղբարց գեղաւանը:

Շիշերն գործարանապետին ըստարագրութիւնը կը կրեն վրանին:

Մայիս 13

Ա Ջ Դ

Հետեւեալ դիրքերը աժան դիրքերով ծախու տրուած են Պահճէ-Գարուն լրագրավաճառ և Ղրավաճառ Պօղոս աղային խանութը: Ընթերցասէրները կը հրաւիրեմք օգուտ քաղել այս առիթէն:

- Մին Աւարայրի 1 1/2 տարուան 45 զրշ.
- Քրիստոնէական Շանչեանց 5 "
- Գարեգին ողբերգ 3 "
- Գարապազցոց անէծքովժուղթ 1

Ռուսաստանի համբաւաւոր Գըրազէաներէն Մսերեանց Մսեր Մազիարոսի գրած «Պատմութիւն Կաթողիկոսաց Էջմիածնի» անուն հետաքրքրական գիրքն որ նորագույն պագրուած է 'ի Մոսկուա, Պօլիս ալ զրկուած լինելով կը ծախուի վերոյիշեալ տեղը:

Գ Ա Ս Ա Գ Ի Ր Ք

ԱՋԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Ս շ խ ա տ ա ս ի բ ե ա յ

Մ կրտիչ Յ. Չօլաքեան

' Ի Գործարանի Զորարան

Սոյն ընտիր գառազիրքը, որն որ Հայկէն սկսեալ մինչև մեր ժամանակներն 1870 թուականը՝ աղային պատմութեան կարևոր և զինալու արժանի գէպքերը պարունակող աշխատութիւն մ'է, բաղկանալով 200 երեսէ, Բ. Տպագրութեամբ 'ի լոյս ընծայեալ, մեր վարժարանացը մէջ աղգային պատմութեան իբր գառազիրք ընդունուելու արժանի գործ մըն է:

Կեդրոնաւեղին է Զարդարեան գործարան Սուլթան Համամթիւ 14

Կը գտնուի նաև շոյր հայ գրավաճառաց քով զին 5 զրշ:

Դպրոցաց համար բուն գինէն աւելի շեղ չկըլայ:

Ի Խ Թ Ա Ր

Ղալաթաւա Եիւքսէք Ղալաթըրմտա 64 նոմէրօլու թէրզի Էննաֆը թիւճճարը միւթէպէրանընտան Պէրնարտ Մարքոնուն տիւքքանընտա հէր նէվի ֆրանսըզ վէ ինկիլիվ ֆապրիքալարընտան էն ալեա գումաշարը պուլունուր, կէրէք ալաթուրքա վէ կէրէք ալաթրանկա վէ ըէսմի էլպիսէլէր տախի շոյթթ հիւնէրլի եաբըլմաքտա օլտուղի վէ թէքմիլ արապաճը էլպիսէլէրի տախի էհվէն ֆիյաթլէ ֆիրուլթ օլունմաքտա օլտուղի վէ եաղմուրուք իչին էն ալեա Իքէրեղլե գումաշ տախի պուլունուր իլան օլունուր: մարտ 23

Վ Ա Ր Ժ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ս Մ Ա Կ Ա Յ

Որն որ ճարտասանական կանոններով շինուած՝ կանոններուն անունները ամեն յօդուածին վերնադիր ունենալով 120 յօդուածով և վկայութիւններով ճառօրէն հաստատուած ընդունելի պերճ նամա:

կանի մը, մանաւանդ աղնիւնիւթերուն և ընտիր ածականներուն կողմանէ մեծ դիւրութիւն մը կուտայ շարագրութեան քերականութիւն ուսանողաց:

Մերձանը Պ. Պաղասար և Պ. Յարութիւն Մարդարեան գրավաճառներուն քով կը ծախուի 12 դա. հեկան:

Ա Ջ Դ

Պալատու Խոր. Երկսեւ վարժարանին համար վարժուհի մը կը փնտռուի, որ ձեռարուեստի բաւական տեղեակ ըլլալէն զատ, պէտք է քիչ շատ ալ Հայերէն լեզուի հմտութիւն ունենայ: Ուղղը պէտք է զիմէ կիւրակէ և լուր օրերը առ Հողաբարձութիւն յիշեալ վարժարանին՝ մինչ ժամ 5:

Ե Ղ Բ Ա Յ Ր Յ Ա Կ Ո Ր Ո Ս

Հ ե ղ ի ն ա կ

ԲՕԼ ՏԸ ԲՕԲ

Հ ր ա տ ա ր ա կ ի շ

Մ. Խ. ԵՂՄԷՆԻՃԵԱՆ

ՏԵՏՐ 33

Սոյն հետաքրքրական և բարոյալից ընտիր վիպասանութիւնը, որ հեղինակին գործերուն առաջինը կը համարուի, հայերէն թարգմանութեամբ տեսար առ տեսար հրատարակութիւնը վերստին շարունակուելու սկսած է: արդ՝ աւելաւ գործը 35 տեսարէ պիտի բաղկանայ:

Կը գտնուի լրագրավաճառաց և գրութիւններու քով, իւրաքանչիւր տեսարէն գինը 1 զրշ:

ՏՕՔԹԷՕՐ ՓԱՓԱՋԵԱՆ

Իր բնակութիւնը հաստատած է Ղալաթիա Հայոց Եկեղեցւոյ փողոց թիւ 12 տունը, ուր պատրաստ է ամեն օր մինչև կէս օր հիւանդ ընդունիլ, և երեքշաբթի օրերն ձրի դատմանել:

Պ Ա Յ Մ Ա Ն Ք Լ Ր Ա Գ Ր Ո Յ

Լ Ր Ա Գ Ի Ր ամեն օր կը հրատարակուի, բաց 'ի կիրակի և Տօն օրերէ:

Տարեկան բաժանորդագրութեան գինն է 200 զրուշ առանց փոսթայի ծախուց:

Բաժանորդագրութիւնը ամսօպլիսէ սկսեալ կը նկատուին:

Խմբագրութեան ուղղեալ ու է գրութիւն՝ հեղինակին բուն ըստարագրութիւնը կրելու է, ոչ թէ հրատարակելու համար: այլ յերաշխաւորութիւն վստահութեան:

Չը հրատարակուած գրութիւնք ետ չը սրուիր:

Տ Ն Օ Ր Է Ն Ի Ս Բ Ա Գ Ի Ր

Ն Ի Կ. Մ. Թ Ի Ի Լ Պ Է Ն Տ Ճ Ե Ա Ն

Տպագրութիւն Ղալաթիա Բէրշեմպէ բաղար Իբսի խանի գիմաց Սամուռ փողոց թիւ 8